ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23,
+374 286 2-23-50, meghri.syuniq@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

N 354
14 մարտ 2018թ.

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 13-ի N16-Ա, N17-Ա, N18-Ն, N19-Ն, N20-Ն, N21-Ա, N22-Ա, N23-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Կատ. Կազմակերպական բաժնի գլխավոր մասնագետ Ն.Մեժլումյան
2-11-81

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՄՇԱԿԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ N 2343
«20» 03 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2018 թվական N16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 13-ի N5 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N134-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին:

7.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր գյուղի գլխավոր հատակագծում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՍՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ No _____
«____» _____ 201 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2018թ. մարտի 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 մարտի 2018 թվական N17–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏԻՆ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՄԻԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2018թ. մարտի 13
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2018թ. մարտի 13-ի թիվ 17-Ա որոշման

Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի
իրականացման վերաբերյալ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	Ծրագրի անվանումը,	Նախահաշիվ/մլն.դրամ/	իրականացված	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հանրային տրանսպորտի ներդրում Մեղրի համայնքում	103,6	12,405	Ներկայումս իրականացվում են կանոնավոր ուղևորափոխադրումներ մասնավոր հատվածի ներգրավմամբ: Ս.թ մարտ ամսին նախատեսվում է համայնքային միկրոավտոբուսների ներդրում
2	Մանկապարտեզի կառուցում Վարդանիձոր գյուղում	37,0	20,0	Շինարարական աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ.
3	Մանկապարտեզների կառուցում Լիճք, Լեհվազ, Շվանիձոր, Կարճևան գյուղերում	68,0	0,0	Մանկապարտեզները նախատեսվում է կառուցել նշված բնակավայրերում գտնվող ամբուլատորիաների հիմքի վրա: ՊՏԱԾ-Հ-ի շրջանակներում այս ուղղությամբ իրականացվել է 18,36 մլն ՀՀ դր-ի ներդրում.
4	Մանկապարտեզի կառուցում Նոնաձոր գյուղում	25,0	0,0	Չի իրականացվել.
5	Մանկապարտեզի կառուցում Ալվանք գյուղում	25,0	0,0	Չի իրականացվել.
6	Մեղրի քաղաքի մանկապարտեզի վերանորոգում	150,0	0,0	Չի իրականացվել.
7	Ճանապարհային սպասարկման համակարգի ձևավորում և համապատասխան տեխնիկայի ձեռքբերում	106,9	0,0	Այս ուղղությամբ ՀՏՀՀ-ին ներկայացված ծրագիրը հաստատվել է: Մեկնարկը նախատեսվում է ս.թ. մարտին.
8	Գյուղմթերքի փոխադրման կազմակերպում և բեռնատար մեքենայի ձեռքբերում	20,0	0,0	Չի իրականացվել.
9	Փողոցային լուսավորության անցկացում Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում	18,6	21,0	Կատարված է:
10	Ագարակ քաղաք մտնող մայրուղու հարևանությամբ <<Հայ-իրանական>> զբոսայգու կառուցում	312,0	0,0	Չի իրականացվել.
11	Քաղաքացիական սպասարկման գրասենյակի հիմնում	8,5	8,7	Կատարված է:
12	Բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելով՝ պլաստիկ աղբից շինանյութերի ներմուծում	390,0	390,0	Ծրագրի շրջանակներում Մեղրի համայնքին հատկացրել են մամլիչներ՝ պլաստիկ աղբի մամլման նպատակով.
13	Մեղրիի Սբ. Սարգիս եկեղեցու պահպանում և ռումբանկարների վերականգնում	216,0	-	Ընթացքի մեջ է:
14	Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգում	50,0	53,9	Ընթացքի մեջ է: Նախատեսվում է ս.թ մարտ ամսին հանձնել շահագործման.
15	Լիճք գյուղում Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում	10,0	0,0	Չի իրականացվել.
16	Նոնաձոր գյուղում Մեղրիի համայնքապետարանի ներկայացուցչական շենքի կառուցում	10,0	0,0	Չի իրականացվել.
17	Մեղրի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում և Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում	150,0	0,0	Չի իրականացվել:

1	2	3	4	5
18	Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրիի մասնաճյուղի վերանորոգում	50,0	0,0	Չի իրականացվել
19	Լեհվազ գյուղի մշակույթի տան վերանորոգում	30,0	0,0	Չի իրականացվել
20	Մեղրի քաղաքում երկրագիտական թանգարանի հիմնում	10,0	0,0	Չի իրականացվել.
21	Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան շենքի հիմքի վրա մարզադպրոցի կառուցում	150,0	0,0	Չի իրականացվել:
22	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	3,6	9,6	Կատարված է:
23	Մեղրիի նախկին պոլիկլինիկայի և Ագարակի նախկին հիվանդանոցի շենքերի վերափոխում բազմաբնակարան շենքերի	150,0	0,0	Չի իրականացվել:
24	Բազմաբնակարան շենքի կառուցում Մեղրի քաղաքում	50,0	0,0	Չի իրականացվել.
25	Բազմաբնակարան շենքի կառուցում Ագարակ քաղաքում	50,0	0,0	Չի իրականացվել:
26	Մեղրիի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում, կանաչապատում	10,0	0,0	Չի իրականացվել.
27	Մեղրու բերդի վերանորոգում	10,0	0,0	Չի իրականացվել:
28	Մեղրի համայնքի գլխավոր հատակագծի կազմում	9,0	0,0	Չի իրականացվել
29	Մեղրիի կոմունալ տնտեսության հավաքակայանի կառուցում	30,0	0,0	Չի իրականացվել
30	Մեղրի քաղաք մտնող այլընտրանքային ճանապարհի ասֆալտապատում	20,0	0,0	Այս ուղղությամբ ՀՏՀՀ-ին ներկայացված ծրագիրը հաստատվել է: Մեկնարկը նախատեսվում է ս.թ. մարտին:
31	Ագարակ քաղաքի Աբովյան փողոցի՝ 300մ հատվածի բարեկարգում, ծառապատում	25,0	0,0	Չի իրականացվել:
32	Ագարակ քաղաքի նախկին հիվանդանոցից Հարենց փողոցի թիվ 40 շենք տանող ճանապարհի ասֆալտապատում	50,0	0,0	Չի իրականացվել:
33	Լեհվազ գյուղի կենտրոնական փողոցի ասֆալտապատում	10,0	0,0	Չի իրականացվել.
34	Մեղրի քաղաքի Գործարարների փողոցի՝ 800մ հատվածում մայթերի կառուցում, ծառապատում, լուսավորության անցկացում	30,0	0,0	Չի իրականացվել:
35	Նկուղային հարկերում թաքստոցների նորոգում	15,0	0,0	Չի իրականացվել:
36	Համայնքի գյուղերում հանգստի գոտիների ստեղծում, հուշաղբյուրներին հարող տարածքների բարեկարգում	10,0	0,0	Չի իրականացվել
37	Գյուղատնտեսական շուկայի հիմնում	10,0	0,0	Չի իրականացվել:
38	Դիահերձարանի կառուցում	15,0	0,0	Չի իրականացվել

Համայնքի ղեկավար՝ Ս. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2018 թվական N18–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը /համաձայն հավելվածի/:

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2017թ. - 31.12.2017թ. ժամանակահատվածի համար):

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման (01.01.2017թ-31.12.2017թ. ժամանակահատվածի համար):

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման(01.01.2017թ-31.12.2017թ.ժամանակահատվածիհամար):

5.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2017թ.-31.12.2017թ. ժամանակահատվածի համար):

6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2017թ.- 31.12.2017թ. ժամանակահատվածի համար):

7.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 մարտի 2018 թվական N19-Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 134-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 134-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
1)Որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում (համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի,
2)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման)կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված2-ի,
3)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի,
4)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 4-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2018թ. մարտի 13
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 13-ի N19 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		-386,5	-386,5	x
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		386,5	386,5	x
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		-50500.0	-50500.0	x
1351	Տեղական վճարներ		50500.0	50500.0	x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 13-ի N19 –Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2421	4	2	1	Գյուղատնտեսություն	1000.0	1000.0	0.0
2511	5	1	1	Աղբահանում	-48026.499	-48026.499	0.0
2560	5	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	7383.333	7383.333	0.0
2641	6	4	1	Փողոցների լուսավորում	17088.333	17088.333	0.0
2661	6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	23554.833	23554.833	0.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-1000.0	-1000.0	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 13-ի N19 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4267	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	300.0	300.0	x
4268	- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1000.0	1000.0	x
4411	- Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	48026.499	48026.499	x
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	- 48026.499	- 48026.499	x
4712	- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	-300.0	-300.0	x
4771	-Պահուստային միջոցներ	4891	-1000.0	-1000.0	x
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-1620.0	x	-1620.0
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	1620.0	x	1620.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 13-ի N19 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 134-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0.0	0.0	0.0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	300.0	.300.0	x
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	-300.0	-300.0	x
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-1620.0	x	-1620.0
				- Տրանսպորտային սարքավորումներ	5121	1620.0	x	1620.0
2421	4	2	1	Գյուղատնտեսություն		1000.0	1000.0	0.0
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1000.0	1000.0	x
2511	5	1	1	Աղբահանում		- 48026.499	- 48026.499	0.0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	- 48026.499	- 48026.499	x
2560	5	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		7383.333	7383.333	0.0
				- Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	7383.333	7383.333	X
2641	6	4	1	Փողոցների լուսավորում		17088.333	17088.333	0.0
				- Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	17088.333	17088.333	X
2661	6	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		23554.833	23554.833	0.0
				- Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական	4511	23554.833	23554.833	x

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 մարտի 2018 թվական N20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՌԻՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2018թ. մարտի 13
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 13-ի
N 20-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:
2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝
հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,
հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,
խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,
ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,
հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,
վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:
3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:
4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:
5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:
7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների·լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում: Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

8.Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:
9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:
11. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:
12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:
13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:
14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին): Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման: Ճաշացուցակը պետք է լինի հայերեն, անգլերեն, ցանկալի է նաև պարսկերեն լեզուներով:
15. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:
Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:
Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:
16. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:
17. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:
Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:
18. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:
19. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:
20. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2018 թվական N21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ 09-005-0067-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,09557 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0602-0065 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,07152 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0602-0069 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,06193 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0602-0070 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,03881 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0602-0071 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,05519 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0602-0072 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,03026 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0750-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,19965 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը, 09-005-0750-0006 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,19289 հա մակերեսով գյուղատնտեսական կատեգորիա՝ «վարելահող» գործառնական նշանակության հողամասը և 09-005-0040-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,00298 հա մակերեսով բնակավայրերի կատեգորիա՝ <<բնակելի կառուցապատման հողեր>> գործառնական նշանակության հողամասը, որոնց նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել համայնքային սեփականություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 մարտի 2018 թվական N22-Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63 հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ ենթակետով, 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 118-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-088-0111-0065 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական հողերի կատեգորիա՝ <<այլ հողատեսքերի>> գործառնական նշանակության 1,31134 հա հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 196701 (մեկ հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր մեկ) ՀՀ դրամ:
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերի կատեգորիա՝ <<այլ հողատեսքերի>> գործառնական նշանակության 09-005-0730-0001 կադաստրային ծածկագրով 0,20656 հա հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 206560 (երկու հարյուր վեց հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:
3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 128 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի կատեգորիա՝ <<այլ հողեր>> գործառնական նշանակության 09-002-0067-0003 կադաստրային ծածկագրով 0,056 հա հողամասը բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 336 000 (երեք հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ:
4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցի թիվ 128/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի կատեգորիա՝ <<այլ հողեր>> գործառնական նշանակության 09-002-0067-0004 կադաստրային ծածկագրով 0,105 հա հողամասը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2018 թվական N23-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՆՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությանը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նոնաձոր գյուղի գլխավոր հատակագծում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է Մեղրի համայնքի Նոնաձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 2.3647 հեկտար այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0115-0001-01-ից) և էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողերից <<էներգետիկայի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակության 0.1499 հեկտար հողամաս (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0115-0001-02) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա՝ պաշտպանական կարիքների համար:

2.Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ (11)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒՆ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՊՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՎԱՍԻԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2018թ. մարտի 13